ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4313-Ա « 03 » սեպտեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի Հ.156-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 17.07.2026 թվականի եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2014 թվականի հունվարի 24-ի «Երևանի Հաղթանակի 5-րդ փողոցի հ.22 բնակելի տան և հողամասի նկատմամբ Վազգեն Դավթի Ղազարյանի իրավունքները վերականգնելու, 76.93քմ. մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.156-Ա որոշման/այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024 թվականի հ. 204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ «ք.Երևան, Հաղթանակի 5-րդ փողոցի հ.22 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման»:

2) Որոշման 3-րդ կետում «քաղաքապետի խորհրդական Հ. Մուրադյանին» բառերը փոխարինել «քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ